ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Անունը, ազգանունը.

Հարություն Վանյան

Զբաղեցրած պաշտոնը

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության վարչության պետ

Գործուղման վայրը և ժամկետները.

Փարիզ (Ֆրանսիա), մարտի 10-13, 2026 թ.

Հրավիրող կողմը.

Եվրոպայի Խորհուրդ, «Եվրոպական ժառանգության օրեր» ծրագրի հրավերով և միջոցներով

Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).

Մանսակցություն «Եվրոպական ժառանգության օրեր» ծրագրի ընթացիկ աշխատաժողովի, որտեղ քննարկվում են ծրագրի զարգացման առաջիկա տարիների ուղղությունները, քաղաքականությունը, որոշվում են համաեվրոպական նոր թեմաների տարբերակները և այլն:

Քննարկված թեմաները.

Քննարկված հիմնական թեման էր՝ պատրաստվելով «Եվրոպական ժառանգության օրեր» ծրագրի 2028 թվականի խորագրին՝ «Վաղվա ժառանգություն. երիտասարդական ժառանգություն, մոդեռն ժառանգություն»: Աշխատաժողովին հրավիրվել էին «Եվրոպական ժառանգության օրեր» ծրագրի սահմանափակ թվով ազգային համակարգողներ, հաշվի առնելով նրանց փորձը պատմամշակութային ժառանգության պահպանության ոլորտում: Քննարկված թեմաներից էին ժառանգության օգտագործման կարևորությունը, երիտասարդների ներգրավումը, հասարակության և մասնագետների մեջ քաղաքակիրթ երկխոսության ձևավորումը և այլն:
Մարտի 11-ին աշխատաժողովի մասնակիցներով զբոսավարի ուղեկցությամբ շրջայց ունեցանք Փարիզի “Le Defanse” արվարձանում, որտեղ ներկայացվեց մոդեռն ճարտարապետության, ժամանակակից արվեստի և պատմամշակութային հուշարձանների համադրության ֆրանսիական փորձը:

Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Աշխատաժողովի հիմնական բանախոսն էր Մեծ Բրիտանիայի ՅՈՒՆԵՍԿՕ-ի ազգային հանձնաժողովի ղեկավարի տեղակալ Մայք Ռոբինսոնը, որի հետ բովանդակային հետաքրքիր քննարկումներ ունեցանք նաև այն համատեքստում, որ Հայաստանը ընտրվել է 1972 թ. ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգության

կոմիտեի անդամ երկիր և մեծ աշխատանք ունի իրականացնելու առաջիկա տարիներին փորձագետների միջոցով: Ռոբինսոնը նաև նշեց, որ ներկա է գտնվելու Հայաստանում աշնանը անցկացվելիք «Մշակութային ուղիներ» ծրագրի համաժողովին, որի շրջանակներում ցանկություն հայտնեց ավելին իմանալու Հայաստանի ու նրա մշակույթի մասին:

Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Քննարկվեցին և ընտրվեցին այն առաջարկվող թեմաները, որոնք կդրվեն քվեարկության առաջիկայում՝ 2030 և հաջորդ տարիների համաեվրոպական թեմաներ դառնալու համար: Իմ երկու առաջարկները՝ "Heritage of Progress" և "Conversation/Conservation" ընդգրկվեցին թեկնածու թեմաների մեջ՝ 2027 թ. քվեարկության համար:

Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Հատուկ նշեցի, որ Հայաստանը բարձր է գնահատում հատկապես «Եվրոպական ժառանգության օրեր» ծրագրի «Եվրոպական ժառանգության երիտասարդ կերտողներ» մրցույթը, որին արդեն 3-րդ տարին է ինչ մասնակցում և հաղթում ենք: Յուրաքանչյուր տարի մենք ունենում ենք ավելի շատ մասնակիցներ և առաջարկել եմ Գրականության և արվեստի թանգարանին՝ դիմել Եվրոպական Միության դրամաշնորհի՝ մրցույթը առավել մասշտաբային դարձնելու և ավելի շատ երիտասարդներ ներգրավելու համար: Գործընկերները և «Եվրոպական ժառանգության օրեր» ծրագրի աշխատակազմը բարձր գնահատեց ներկա ազգային

համակարգողների ներդրումը աշխատաժողովի արդյունքների մեջ և առաջարկեց շարունակել առաջիկայում կայանալիք աշխատաժողովներին մասնակցությունը:

Ստորագրությունը, ամսաթիվը: 17.03.2026թ

Պատմության և մշակույթի հուշարձանների
պահպանության վարչության պետ,
«Եվրոպական ժառանգության օրեր»
ծրագրի ազգային համակարգող՝ ***Հարություն Վանյան***